

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## Արձանագրություն

### ՏՀՏ լիդերների հանդիպում ֆորումի

Հանդիպման վայրը՝ ք. Աղվերան, «Արթուրս» հյուրանոցային համալիր

Հանդիպման ժամկետը՝ 06-07. 12. 2014թ.

Մասնակցեցին՝

Մասնակիցների ցանկը կցված է,


Օրակարգում՝

1. Եվրասիական միություն՝ ինդիքներ և հնարավորություններ,
2. Հանրակարթական դպրոցներում ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի ներկայացում,
3. Մեկ ընկերություն, մեկ դպրոց ծրագրի ներկայացում:

Քննարկման մասնակիցներին ներկայացվեց, որ Հայաստանը միացել է Եվրասիական տնտեսական Միությանը /ԵՏՄ/, որտեղ արդեն իսկ կարգավորված են ապրանքաշրջանառությանը վերաբերվող ընթացակարգերը, բացի այդ Հայաստանի միացումը ԵՏՄ-ին ենթադրում է նաև ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ շրջանառությունը՝ ինչը հնարավորություն է տալիս կազմակերպություններին ԵՏՄ երկրներում չբացելով մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ազատ ծառայություններ մատուցել: Այս առումով ԵՏՄ-ն ավելի շատ ազատություններ է նախատեսում, քան Եվրամիությունը:

Ստեղծված է վերաբերական կառավարման 4 մակարդակ ունեցող մարմին, որոնք որոշելու են ԵՏՄ գործունեության հետ կապված հարցերն ու ուղղությունները: Բացի այդ կա նաև այսպես կոչված 5-րդ օղակը/կոնսուլտացիոն մարմին/, որը առաջինն է քննարկում հարցերը, ապա ներկայացնում դրանք վերաբերական կառավարման մարմիններին: Կոնսուլտացիոն մարմիններում մասնակցում է բիզնեսը, որտեղ «բիզնես դիալոգ» ձևաչափի միջոցով, բոլոր 4 երկրների բիզնեսի ներկայացուցիչները մասնակցում են խորհրդատվական կոմիտեների աշխատանքներին: ԵՏՄ-ն ներկա դրությամբ ունի 8 նախարար, որոնք աշխատում են 8 ուղղություններով, ինչպես նաև գործում է 12 խորհրդատվական մարմին, որտեղ ընդգրկված է բիզնեսը: Եթե 4 երկրների բիզնեսի ներկայացուցիչները ինչ-որ բանի հետ համաձայն չեն, ապա նրանք առաջ չեն քաշում առաջարկվող որոշումները վերաբերական մարմինների քննարկմանը, սակայն դա տեղի է ունենում այն դեպքում, երբ բիզնեսը ունի ակտիվ դիրքորոշում:

ԵՏՄ մյուս կարևոր մարմինը, դա ԵՏՄ դատարանն է, որը նոր է ստեղծվում և գործելու է հունվարի 1-ցի: Դատարանը գործելու է համաձայնագրում և կնքվող պայմանագրում ամրագրված սկզբունքներով: Դատարան կարող են դիմել 2 դեպքում՝ 1-ինը այն դեպքն է, երբ պետությունը դիմում է այլ պետության դեմ՝ ԵՏՄ համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար: 2-րդ դեպքը, երբ տնտեսվարող սուբյեկտները դիմում են համապատասխան գերատեսչական մարմին բարձրացնելով ինչ-որ խնդիր: Գերատեսչական մարմինը դիմում է ԵՏՄ հանձնաժողով և եթե 1 ամսվա ընթացքում



## ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

բարձրացված ինդիքը 1 ամսվա ընթացքում լուծում չի ստանում, ապա հարցի լուծումը անցնում է դատարանի քննության:

Մոտակա 10 տարիների ընթացքում մեծ ուշադրություն է դարձվելու ԵՏՄ համակարգի թվայնացմանը: Այս առումով ներկայումս առկա է նախագծերի լուրջ պակաս և եթե Հայաստանը ակտիվորեն ներկայացնի նախագծեր, անգամ այն դեպքերում, երբ պարզ չէ դրանց ֆինանսավորման հարցը, ապա միևնույն է , եթե նախագիծը կրում է ինտեգրացիոն բնույթ, այն, անպայման կիրականանա:


ԵՏՄ-ում գործելու է մի առանձնահատկություն կապված որոշ սարքերի ներմուծման հետ: Մասնավորապես սահմանված է 2 սահմանափակում հեռահաղորդակցության ոլորտի այնպիսի սարքավորումների վրա, որոնք իրենց մեջ պարունակում են թաքնագրման/կրիպտոգրաֆիայի/ բովանդակություն: Նշված սարքերը պետք է ԵՏՄ-ում անցնեն նույնականացում/նոտիֆիկացիա/: Այս առումով ԵՏՄ կայքում առկա է այն ապրանքների ցանկը, որոնք անցել են նույնականացում և ստացել են համապատասխան կոդեր, ինչը մեր երկրի համար ևս մեկ անգամ նույնականացում իրականացնելու անհրաժեշտություն չի առաջացնի: Նույնականացումն իրականացվելու է ԱԱԾ- կողմից:

Երկրորդ առանձնահատկությունը կապված է միգրացիայի և ծառայությունների հետ: Այսինքն՝ երբ մեր երկրում ծառայություն է մատուցվում ԵՏՄ անդամ պետության երկրների իրավաբանական անձանց, կամ երբ աշխատող է գործուղվում այնտեղ որոշակի աշխատանքներ կատարելու համար, ապա այս աշխատողները միգրացիոն և աշխատանքի թույլտվության ինդիքներ չեն ունենա: Ինչ վերաբերվում է ծառայությունների ազատականացմանը, ապա այդ գործընթացը տեղի է ունենալու փուլ առ փուլ, և մինչև տարվա վերջ կհստակեցվի այն ծառայությունների ցանկը, որոնք ամբողջությամբ կազատականացվեն: Այս պահի դրությամբ առկա է մի ինդիք, որը կապված է անհատական տվյալների պաշտպանության հետ: Երկրները պնդում են, որ պետք է լինի մեկ միասնական համաձայնագիր, որը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին:

Այնուհետև մասնակիցներն անցան հարց ու պատասխանի ձևաչափով քննարկմանը, հարցերն ուղղելով ՀՀ մաքսային, հարկային մարմինների ներկայացուցիչներին:

Հարց. եթե ընկերությունը ծառայություն է մատուցում ՌԴ-ում, հնարավոր է արդյոք, որ այդ աշխատողների աշխատանքները խոչընդոտվեն, օրինակ՝ աշխատողին դեպորտ անեն: Եթե աշխատողները գնում են եկար ժամկետով կամ եթե աշխատող է ուղարկվում ներկայացուցչություն բացելու և տեղում աշխատելու համար, ապա ինչ հարկային պարտավորություններ են առաջանում:

Պատասխան. համաձայնագրով ֆիքսված է, որ մեր երկրի աշխատուժը օժտված է նույն իրավունքներով ինչ այդ երկրի աշխատուժը, սակայն մեր աշխատողը պետք է տեղեկություն հայտնի հարկային մարմին, որ ինքը այստեղ աշխատում է: Ներկայումս աշխատանք է տարվում, որպեսզի մեր աշխատողները, որոնք գնում են աշխատանքային կամ քաղիրավական պայմանագրով, միգրացիոն քարտեր չըրացնեն: Այն դեպքում, երբ առկա է աշխատանքային պայմանագիր, ապա ստուգողը պարտավոր է ճշտել իրենց բազայում աշխատանքային



## ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

պայմանագրի գոյությունը: Ակտիվ աշխատանքներ են տարվում նաև նշված տեղեկատվությունը տրամադրելու ձևերը որոշելու վերաբերյալ:

Հարց. եթե աշխատողը գտնվում է ՌԴ-ում, սակայն վճարվում է Հայաստանից, ապա հարկային բեռը հայկական կողմի վրա է, թե՞ ռուսական:

Պատասխան. ռեզիդենտության սկզբունքը հարկային իմաստով մնացել է նույնը, ինչ գործում է այսօր: Ինչ վերաբերվում է տրանսնացիոնալ ծառայությունների մատուցմանը, ապա կա հատուկ կարգավորում անուղղակի հարկերի մասով, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման տարածքից կախված որոշվելու է, թե որ ռեժիմով է իրականացվելու գործունեությունը: Եկամուտների մասով հարկումը կատարվում է ըստ աղբյուրի, այսինքն՝ եթե եկամուտները ստացվել են հայաստանյան աղբյուրից, ապա հարկումը իրականացվում է այստեղ: Այս մասով փոփոխություն տեղի չի ունեցել: Անուղղակի հարկերի մասով հարկվում է միայն ծառայությունների մատուցումը ծառայությունների արժեքից, ծառայությունների մատուցման վայրի սկզբունքով: Այս իմաստով նույնպես օրենսդրական փոփոխություն չի եղել: Բացի այդ, համաձայնագրում նշված է նաև, թե որ ծառայությունների դեպքում, որն է համարվում ծառայությունների մատուցման վայր: ԵՏՄ տարածքում՝ Էլեկտրոնային ծառայությունների մատուցման մասով բացվելու են մեծ հնարավորություններ տարածաշրջանի համար: Պետական գնումների մասով ԵՏՄ մասնակից պետության ընկերություններին այլ երկրների ընկերությունների հավասար պայմանների դեպքում կտրվի լրացուցիչ 15% առավելություն:

Հարց. ԵՏՄ կազմում պետական գնումներով ինչպես է իրականացվելու հայտերի ընդունումը:


Պատասխան. Հայաստանը պարտավորություն է վերցրել պետական գնումների մասով մասնակցությունն ապահովել բացառապես Էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հարց. ԵՏՄ երկրների միջև արդյո՞ք հավասարեցնելու են հարկերը, տուրքերը և ԱԱՀ:

Պատասխան. Այս հարցի կապակցությամբ ԵՏՄ անդամ պետությունների կողմից որոշում չի կայացվել: Թողնվել է մրցակցության կանոնների կիրառության սկզբունքը: Օրինակ Ղազախստանում ԱԱՀ-ն կազմում է 12%, ՌԴ-ում և ՀՀ-ում՝ 20, իսկ Բելառուսում՝ 18: Սակայն կախված մրցակցության սկզբունքից պետությունները իրենք են որոշելու, թե՞ ինչ նազանավարությամբ են շարժվելու՝ ԱԱՀ նվազեցնելու, թե՞ այլ հարկային արտոնությունները ավելացնելու միջոցով:

Հարց. կարող է արդյոք հայաստանյան ընկերությունը օգտվել ԵՏՄ անդամ պետությունների պետական ծրագրերից: Կան արդյո՞ք ԵՏՄ միութենական ծրագրեր: Ինչպես է Հայաստանը ներկայացված լինելու ԵՏՄ-ում:

Պատասխան. կազմակերպությունները պետք է այնտեղ ներկայացուցչություն բացեն, որպեսզի կարողանան մասնակցել պետական ծրագրերին, բացի այդ կան առաջարկություններ համատեղ իրականացնելու համատեղ ծրագրեր: Ինչ վերաբերվում է ներկայացուցչությանը, ապա ՀՀ-ն ներկայացված է 3 փոխնախարարների մակարդակով: Ներկայումս ստեղծում են



## ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

միություններ, որոնք զբաղվելու են ինտեգրացման գործընթացներով: Այս մասով պետք է մշակվի նաև ռազմավարություն: Կա հուշագիր Բելառուսի և ՌԴ ՏՏ ասոցիացիաների հետ:

Հարց. իրականացվել է արդյոք ԵՏՄ վերապատական մարմիններում ընդգրկված աշխատուժի վերապատրաստում, որոնց միջոցով պետք է իրականացվի շահերի պաշտպանություն: ԵՏՄ դատարանի որոշումների վերաբերյալ անհամաձայնության դեպքում կա արդյո՞ք վերադաս դատարան և ինչպես է որոշվելու բողոքարկման դեպքերը:

Պատասխան. սկզբնական շրջանում կլինեն դժվարություններ հատկապես մաքսային ոլորտում, կապված նոր օրենսդրական կարգավորումներով: Սակայն Հայաստանի միանալը ռազմավարական առումով ավելի ճիշտ է, քանի որ այդ դեպքում Հայաստանը չի դիտվում որպես միացող երկիր, որի համար համաձայնագիրը ունի կարգավորման այլ դրույթներ, և հետևաբար ավելի սահմանափակ իրավունքներ, այլ դիտվում է որպես հիմնադիր պետություններից մեկը, որը օժտված է ավելի լայն իրավունքներով, հետևաբար ավելի լսելի է լինելու Հայաստանի ձայնը վերապատական մարմիններում: Կադրային առումով կնշանակվեն ևս երկու ներկայացուցիչ, որոնք կներկայացնեն Հայաստանի շահերը, կնշանակվի նաև երկու դատավոր և երեք նախարար:


Հարց. ինչպես է իրականացվելու միջազգային այլ կազմակերպությունների հետ աշխատանքը, կան արդյո՞ք սահմանափակումներ:

Պատասխան. միակ սահմանափակումը միջազգային դաշտում կապված է առևտրի համաշխարհային կազմակերպության հետ: Այն ուլորտները, որոնք կարգավորվում են ԱՀԿ որոշումներով, կարգավորվելու են միասնական որոշումներով:

Հարց. հեռահաղորդակցության ոլորտի ապրանքների նկատմամբ կիրառվող նույնականացման գործընթացներն ու սերտիֆիկացումն արդյո՞ք նույն գործընթացներն են:

Պատասխան. նույնականացումն ու սերտիֆիկացումը տարբեր գործընթացներ են: Սերտիֆիկացումը վերաբերվում է ապրանքների տեխնիկական բնութագրերին համապատասխանելուն, իսկ նույնականացումը՝ ստուգում է ԱԱԾ տեսանկյունից: Սերտիֆիկացումը ստուգում է ապրանքի ազդեցությունը շրջակա միջավայրի, առողջության և այլնի վրա: Հարցը կայանում է նրանում, որ հայաստանյան սերտիֆիկացիոն մարմինը պետք է հավաստագրված լինի հավաստագրման մարմնի կողմից այն մասով, որ նա կարող է իրականացնել սերտիֆիկացում համաձայն ԵՏՄ սահմանված չափանիշների: Բացի այդ կա նաև հայտարարագրման գործընթաց, որը նախատեսված է ապրանքների որոշակի տեսակի համար, որոնց ցանկը սահմանված է: Այս մասով ընկերությունը ապրանքի վերաբերյալ հայտարարագիր է տալիս հավաստագրման մարմնին, որը այդ ապրանքի տեղեկությունը մուտքագրում է միասնական ռեեստրի մեջ:

Հարց. ներկայումս որոշ տեսակ ապրանքների համար/հեռախոս, պլանշետ և այլն/ պահանջվում է ՌԴ ԱՀԾ /ՓԵՑ ԲՓ/ հատուկ սերտիֆիկացում: Արդյո՞ք այդ սերտիֆիկացումը մնալու է, թե դա անցնելու է միասնական սերտիֆիկացման մարմնին: Կա արդյո՞ք որևէ սահմանափակում, եթե տնտեսվարողը ԱՄՆ քաղաքացի է, սակայն աշխատում և արտադրում Հայաստանում:



## ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Պատասխան. այս հարցի կապակցությամբ ճիշտ է դիմել ԱԱԾ մարմիններին: Համաձայնագրով օտարերկրյա ներդրումներին տրված է ազգային ռեժիմ և հիմա մենք պետք է շատ ակտիվ աշխատենք այդ ուղղությամբ և հասնենք նրան, որ ԱԱԾ-ն չնախատեսի սահմանափակումներ այն դեպքերի համար, երբ ընկերության կապիտալը կամ ընկերության ղեկավարությունը, որը գործում է Հայաստանում օտարերկրյա է:

Հարց. ինչպես է տրամադրվելու ներկայիս մաքսային օրենսգրքի 87 հոդվածով նախատեսված թույլտվությունը ապրանքների ձեռքբերման գնի մեթոդով մաքսագերծելու համար:

Պատասխան. թույլտվությունը իրականացվելու է նույն կարգով, պարզապես ԵՏՄ մաքսային օրենսգրքով դա կարգավորվելու է 78 հոդվածով:

Հարց. շահութահարկի մասով փոփոխություններ լինելու են թե ոչ:


Պատասխան. շահութահարկի մասով միասնական ոչինչ նախատեսված չէ: Շարունակում են գործել այն կանոնները, որոնք գործում են ներկայումս:

Հարց. ինչպես են փոխվելու մաքսային ընթացակարգերը:

Պատասխան. ընթացակարգերի հետ կապված հարցերը դեռ քննարկման փուլում են: Ներկայումս կա ինդիք բեռը Վրաստանի տարածքով անցկացնելու առումով: Մասնավորապես ՀՀ-ում կապարակնված մեքենան մտնելով ՌԴ ազատ կարող է տեղաշարժվել, բայց կարող են լինել դեպքեր, երբ Վրաստանի մաքսային մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում կարող են իրականացնել զննում: Այս դեպքում ինդիք է առաջանում ՌԴ-ի համար նույնականացման հետ կապված, քանի որ կապարակնիքները պոկվում են: Ինչ վերաբերվում է հայտարարագրման ձևին, ապա մենք աշխատում ենք, որ հայտարարագրումը իրականացվի էլեկտրոնային եղանակով:

Օրակարգային հաջորդ հարցերը վերաբերում էին հանրակրթական դպրոցներում ինժեներական լաբորատորիաների ներդրման կարևորությանն ու «Մեկ ընկերություն-մեկ դպրոց» ծրագրին: Քննարկման մասնակիցներին ներկայացվեց հանրակրթական դպրոցներում ինժեներական լաբորատորիաների ներդրման կարևորությունը, ծրագրի իրականացման մեխանիզմները, որոնք ձևավորվել են «Ռոբոտաշինությունը սկսվում է դպրոցից» ծրագրի մեկամյա փորձի արդյունքում: Ներկայացման ընթացքում ընդգծվեց որակյալ մասնագետների պակասի ինդիքը:

Քննարկվեց նաև «Մեկ ընկերություն-մեկ դպրոց» ծրագիրը և արժանացավ ընկերությունների ղեկավարների հավանությանը: Ընկերությունների ղեկավարները կարևորեցին ՏՀՏ ոլորտի մասին տեղեկատվության տարածումը և հեղինակության բարձրացումը: Որակյալ կադրերի բացը լրացնելու նպատակով՝ ծրագրի իրականացումը համարեցին անհրաժեշտ և տեղին, որն ավելի մեծ հնարավորություն կտա գտնել համապատասխան կադրեր և տալ տվյալ ընկերությունում աշխատելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Ծրագիրն ամբողջ ուժով ներդրելու համար անհրաժեշտ է միայն դպրոցների պատրաստակամությունը:



ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ